ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՈՒԺԻՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5-Լ

ՏԵՂԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ, ՔԱՐՏԱԴԱՐԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 2115-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 13-ի «Ոստիկանության ստորաբաժանումների կողմից քննության ենթակա վարչական իրավախախտումներ կատարած անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին» N 292-Ն որոշման հավելվածի N 1-ի 10-րդ կետով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» N 751-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ տեղային և կենտրոնացված հաշվառման քարտադարաններում տեղեկությունները պահպանելու և քարտադարանները վարելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի, մարզային, անձնագրային և վիզաների վարչությունների ենթակա տարածքային ստորաբաժանումների պետերին՝ եռամսյակը մեկ ամփոփել հաշվետու ժամանակահատվածում արձանագրված վարչական

իրավախախտումների արդյունքները և մինչև հաջորդ ամսվա 15-ը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի, մարզային, անձնագրային և վիզաների վարչություն ներկայացնել հաշվետվություն՝ համաձայն հավելված 2-ի:

3. ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության, պարեկային ծառայության, անձնագրային և վիզաների, Երևան քաղաքի և մարզային վարչությունների պետերին՝ յուրաքանչյուր տարի ամփոփել նախորդ տարվա ընթացքում արձանագրված վարչական իրավախախտումների արդյունքները և մինչև հունվարի 25-ը ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն ուղարկել տարեկան հաշվետվություն՝ համաձայն հավելված 2-ի:

4. ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների (բացառությամ սույն հրամանի 3-րդ կետում նշված ստորաբաժանումների) պետերին՝ յուրաքանչյուր տարի ամփոփել նախորդ տարվա ընթացքում իրականացված ծառայողական քննության արդյունքները և մինչև հունվարի 25-ը ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն ուղարկել սույն հրամանի հավելված 2-ով սահմանված աղյուսակի 3-րդ սյունակի վերաբերյալ տեղեկատվություն (առկայության դեպքում):

5. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պետին՝ ամփոփել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունից, պարեկային ծառայությունից, անձնագրային և վիզաների, Երևան քաղաքի և մարզային վարչություններից ստացված հաշվետվությունները, ինչպես նաև սույն հրամանի հավելված 2-ով սահմանված աղյուսակի 3-րդ սյունակի վերաբերյալ ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված տեղեկատվությունը և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված ՁԼ 1-ՎԻ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվությունը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե:

6. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված հայտերի համապատասխան՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 13-ի N 292-Ն որոշման 1-ին կետի

2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված հաշվառման քարտերի և պահանջագրերի տպագրությունը:

7. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 08.09.2008 թվականի «Տեղային և կենտրոնացված հաշվառման քարտադարաններում տեղեկությունները պահպանելու և քարտադարանները վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 2115-Ա հրամանը:

8. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ***Վ.ՂԱՋԱՐՅԱՆ***

«04»__03____2022թ.

ք.Երևան

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի
2022 թվականի Դեկտեմբեր 4-ի
թիվ 5- -Լ հրամանի

ԿԱՐԳ

ՏԵՂԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է վարչական իրավախախտում կատարած անձանց վերաբերյալ տեղեկությունները տեղային և կենտրոնացված հաշվառման քարտադարաններում պահպանելու և քարտադարանները վարելու կարգը:

2. Տեղային հաշվառման քարտադարաններում վարչական իրավախախտում կատարած անձանց վերաբերյալ հաշվառման քարտերը (այսուհետ քարտեր) տեղադրվում են այբբենական կարգով, իսկ ավտոմատացված համակարգի առկայության դեպքում տեղեկությունները մուտքագրվում են նաև համակարգիչ:

3. Նախածանցներով կամ վերջածանցներով ազգանունների առկայության դեպքում այբբենական կարգով քարտերը տեղադրելու ժամանակ այդ ածանցները հաշվի չեն առնվում:

4. Կենտրոնացված հաշվառման քարտադարանում քարտերը ստանալուց հետո նրանցում պարունակվող տեղեկությունները մուտքագրվում են համակարգիչ, իսկ քարտերը տեղադրվում են քարտադարանի մետաղյա պահարանում՝ ըստ ստորաբաժանումների և ըստ ստորաբաժանման կողմից կազմված վարչական իրավախախտման արձանագրության հերթական համարի:

5. Ավտոմատացված քարտադարանների համակարգչային բազաների տվյալների կրկնօրինակները պահվում են էլեկտրոնային կրիչների վրա՝ մետաղյա պահարանում:

6. Տեղային և կենտրոնացված հաշվառման քարտադարաններում տեղեկությունները անվնաս պահպանելու նպատակով չի թույլատրվում՝

1) կողմնակի անձնաց մուտքը քարտադարան,

2) պահել հաշվառման քարտերը քարտադարանի տարածքից դուրս,

3) հանել պահպանման ժամկետը չլրացած հաշվառման քարտերը, ինչպես նաև կատարել փաստաթղթով չհիմնավորված տեղեկատվության սրբագրում,

4) քարտերը տրամադրել այն ծառայողներին, որոնց ծառայողական գործունեությունը անմիջական կապ չունի այդ քարտերի հետ,

5) բանավոր հարցումներին տալ գրավոր կամ բանավոր պատասխաններ:

Քարտերի, գրությունների և մատյանների պահպանման ժամկետները կարգավորվում են ՀՀ ոստիկանության պետի 11.07.2007թ. թիվ 55-Ագ հրամանով:

Հավելված 2
ՀՀ ոստիկանության պետի
2022 թվականի Դեկտեմբեր 4 -ի
թիվ 5 -Լ հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ (ՀՀ ՎԻՎՕ) ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տողի համարը	ՀՀ ՎԻՎՕ հոդվածի համարը	Հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը	Կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի քանակը (ՀՀ ՎԻՎՕ 15-րդ հոդված)	Կայացված որոշումների քանակը (սյ.5+6+7+8)	այդ թվում՝			
					վարչական տույժ նշանակելու մասին	վարչական վարույթի կասեցման մասին	վարչական գործի վարույթը կարճելու մասին, կապված՝	
							դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու հետ	այլ հանգամանքների հետ
Հ/Հ	1	2	3	4	5	6	7	8
1.								
2.								
3.								
4.								
5.								
6.								
7.								
8.								
9.								
...								
Ընդամենը								

Կիրառվել են վարչական տույժեր (սյ. 5-ից)									
նախազգուշացում	տուգանային միավոր	տուգանք	տուգանքի գումարը, *հազ. դրամ*		վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնում	վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում	տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում	հատուկ իրավունքից զրկում	տնտեսական գործունեության կասեցում
			նշանակվել է	գանձվել է					
9	10	11	12	13	14	15	16	17	18

Կատարող՝ _____

Պաշտոն, կոչում, անուն, ազգանուն, ստորագրություն

_____

ծառայության, ոստ մարմնի անվանումը

ՊԵՏ՝ _____

Պաշտոն, կոչում, անուն, ազգանուն, ստորագրություն

« »_____20 թ.